և 'ի սմին նուագի զհրամանն ընդհանուր նորոգութեան
եւոյ Յունաց, չտիրելոյ՝ չդրաւելոյ՝ չյափշտակելոյ պայ-
մանաւ զտեղիս իւրաքանչիւր ազգաց. ըստ զօրութեան
հրովարտակացն Սէլիմայ՝ ընկերովի տեղիսն ընկերութեամբ,
և զսեփհական բնակութիւնս՝ անկախութեամբ ժառանգել.
և վերջապէս ծանուցաւ երկուց կողմանց վարիլ ըստ տը-
րամադրութեան նոցին։ Եւ նոքա յանձն առեալ ընկալան,
որով վերջացաւ խսդառ վէճն և խռովութիւնն. և Դատա-
ւորքն Իլամ արարեալ մատուցին առ Թագաւորութիւնս
և դրեցաւ հրովարտակ (Խաթթի Շէրիֆ) երկուց ազգաց.
յորս բովանդակեցան խմաստք Իլամին և հրովարտակացն
Սէլիմայ ոճովք իւրեանց՝ և զհանգամանս դատին, 'ի հաս-
տատութիւն նորին։ Եւ արձանագրեցան 'ի Դիւանս և 'ի
Դատարանս, և սակս գործադրութեանցն նշանակեցան 'ի
գլուխս նոցունց։ Սակայն հարկ էր քննել զսեփհական տե-
ղիս Հայոց՝ թէ որքան ծախս լեալ իցէ վասն չինութեան
ձեռամբ Ոստիկանի, Մուվէլլայի՝ և Ճարտարապետի, ծա-
նուցանել զնշմարիսն ասա. զհրովարտակն արձանագրել
'ի Դատարանի տեղւոյն և փոյթ տանել գործադրութեան,
և վարիլ ըստ տրամադրութեան նորին, և վասն այսոցիկ
իրաց Կայսերական հրամանաւ և ակնարկութեամբ մեծի
Դենպետին որոշեցան Մուստաֆա Բաշիա Ոստիկան (մու-
պաշիր). Մէհէմմէտ Գալֆայ Ճարտարապետ եւ առաքե-
ցան յԵրուսաղէմ առնել ըստ մտաց հրովարտակին, եւ
իւրաքանչիւրոց զգուշութեամբ հոգ տանիլ գործադրու-
թեան հրովարտակին Հայոց։

Զի թէպէտ նուիրական պարտաւորութիւն էր ամենե-
ցուն շմնիլ յայնպիսի գործս, որք արտաքոյ են իշխա-
նութեան իւրեանց, եւ հեռի մնալ պաշտպան և տէր լի-
նելոյ միոյ կողման. զի Բեթղեհէմ եւ գերեզմանն Ս. Աս-
տուածածնի բացայայտ դրեալ է 'ի հրովարտակս Սէլիմայ,
այլ Դատաւորն Երուսաղէմի ազահութեամբ իւրով զմի
կողմն պաշտպանելոյ ջանիւք, խռովութիւն հանեալ է
վասն Բեթղեհէմի և գերեզմանի Ս. Աստուածածնի, և ա-
ռիթ առեալ հակառակ խմաստիւք գրեալ զարձանագրու-
թիւնս Հէօճմէթիից, զորս Դատաւորքն Երուսաղէմի ժա-
մանակ առ ժամանակ տուեալ են երկուց ազգաց։ Զոհ և